

531

レ V. 3

40

ՍԱՆԴԻՄ



40

ՍԱՆԴԻՄ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԻԷՍ

Գրութիւններ, որոնք եւ չեն դարձուի՝
պէտք է խրիել «Խուզակ»ի վարչութեան,
Վստնա

Administration de Khousag

Varna

Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆր.

» » վեշտակեան 5 »

Օսար երկիրներու համար տրկն. 12 »

» » վցնայ. 6 »

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

Ներկայ տագնապալի ժամանակնէն
բուն մէջ՝ երբ բնագաւառը արիւն կը
հոտի, պանական սորոտփը կը սար-
սըռեցնէ հայրենարնակ ազգակիցներ,
և դիւանագիտական վայրագ խաղերու
վախճանին կը աւարտապէս կը սպասեն
հայեր առ հասարակ, մեզ թերեւս հար-
ցուի թէ ի՞նչպէս կը յանգդնինք հրա-
տարակել այսպիսի թերթ մը:

Հարցը բանաւոր է ու ջլատիչ բայց
մոռնալու չէ թէ մետալը ունի նաեւ իր
հակառակ կողմը:

Հայ ազգը ունի իր ներկան և մեծ
յոյսով ենք որ պիտի ունենայ իր ապա-
գան: Ներկային մէջ նա՛ կը ներկայա-
նայ իր բիւրազան ու խոր վերքերով,
զորս տուն բռնակալութիւնները, տգի-
տութիւնը, նախապաշարութիւնները: Ա-
պագային մէջ կը փափաքինք որ նա՛
ներկայանայ կորովի, կայտառ, վեր
ամէն վնասակար կաշկանդութիւններէ:
Ասոր համար պէտք է որ իւրաքանչիւր
հայ որոշէ իր ճակատագիրը համաձայն
ճշմարիտ գիտութեան սկզբունքներուն,
ամէն հայ անհատ գիտակցութիւն ու-
նենայ իր կեանքին:

Եթէ հայրենիքի հայերը անգթու-

թեան արիւնաքամ ճիւղներուն մէջ
են, տարադիր հայերն ալ իրենց միջա-
վայրին զոհերը պիտի ըլլան թէ որ
չնանան շինծու քաղաքակրթութեան
տրտփին փայլէն ու անոր խայծէն
և շտեմենն անոր դժոխային թակարդ-
ները: Մէկին և միւսին ցուցնել թէ
ինչ են արդի ընկերական կազմակեր-
պութիւնները և հաստատութիւնները,
ներկայացնել ամէն առողջ ու ազատա-
բար գաղափարներ և տեղեկութիւններ,
դա՛ պէտք է ըլլայ ամէնէն աւելի ան-
կեղծ ու ճշմարտանուէր մամուլին գոր-
ծը, յետին ծայր կարեւոր ներկայ պա-
րագայիս մէջ, քանի որ կը գտնուինք
փոխանցական շրջանի մը մէջ, քանի
որ մեր վաղը մեծապէս կախում ունի
այսօրէն:

Յիշատակելի դիկտատորական սգին
անպատու դարձուց 1648ի անգղիական
յեղափոխութիւնը, որ կրնար իր լու-
արդիւնքներով յեղաշրջած ըլլալ արդի
անգղիական և թերեւս Եւրոպան: '89 ի
Ֆրանսական յեղափոխութեան ուղղու-
թիւնը և ծայրայեղութիւնները յառաջ
բերին Նաբոլէոն մը և ասոր հետ սուր,
հուր, աղետալի արհեստագործութիւն
մը և յեղափոխութիւններ:

Մեր աչքերը ուղղելու ենք ան
փարոսին կամ փնտռելու ենք այն փա-

րոտը որ մեզ առաջնորդէ օր մը բոլորովին ապահով նաւահանեիստ մը, այսպիսի սոսկալի ալեկոծութենէ մը վերջ:

Մենք՝ խորապէս յուզուած մեր հայրերուն ու եղբայրներուն կրած անլուր ու բազմադիմի տառապանքներէն, ինչպէս նաեւ մեր մայրերուն ու քոյրերուն, կը սիրենք քալել հայ ժողովուրդին հետ անոր յայտնելով ամէն ժամանակ առտնին, կրթական, տնտեսական, վարչական, գրական, գիտական, իմաստասիրական և այլն ճիւղերու վրայ մեր կամ երոպացի գրողներու մտածումները կամ արտադրութիւնները, զորս իրաւունք ունի քննութեան բովէն անցնելու: Մենք կ'ուզենք աւելի՛ իրեն թելադրել քան հրամայել. քաղաքացի կ'ուզենք տեսնել հայերը և ոչ թէ հպատակ՝ գտնէ գաղափարի աշխարհին մէջ առ այժմ:

Թէ ո՛րքան յաջողութեամբ պիտի կատարենք մեր պաշտօն, թէ ո՛ր տատիճան հաւատարիմ պիտի գտնուինք մեր դրօշին—ծրագիրին, դա պիտի ցուցնէ ապագան—չը՛հայեաց, անաչառ քննադատութիւնը:

Մեր ծրագիրը՝ ուր պարզուած են մեր նպատակը և ուղղութիւնը, կ'երեւի մի և նոյն ատեն ներկայ թիւին մէջ:

Հոս հարկ չենք սեպեր անոր մասերը նորէն մէջ բերել. միայն կ'ուզենք շեշտել սա կէտը թէ մեր թերթը բաց է տարբեր ուղղութեան ու գաւանանքի վերաբերող գրիչներու առջեւ, բաւական է որ անկեղծ ըլլան իրենց համոզումներուն մէջ և քաղաքավար իրենց վիճաբանութիւններուն կամ քննադատականներուն մէջ, ինչպէս նաեւ հըմտալից: Իբրեւ սկզբունք ընդունած ըլլալով արդէն խիղճի, միտքի և խօսքի ազատութիւնը, կ'ուզենք որ փաստերուն զօրաւոր ճշմարտութիւնը ըլլայ ընդհանուր միջոց մը յաղթանակել տա-

լու այս կամ այն ճշմարիտ ու վեհ սկզբունքները և ջախջախելու փրասակար հակառակորդները: Մեզ համար երբ սխալ, փտած գաղափարները վերնան, վերջացած կ'ըլլան նաեւ անոնց պաշտպանները. ուստի անձերէ աւելի գաղափարներու հետ է մեր դործը. բացառութիւնները միշտ կան ու կան:

Գաղափարներու զօրութեան հաւատալով, մեր իղձն է որ ճշմարիտ գաղափարներու մարտիկները բազմապատկին ամէնուրեք, կարենալ օր մը հակադէմ մարդկութեան ընդհանուր բարեբաւտութեան թշնամի ուժերը:

Հաւատալով նաեւ որ տիեզերքին մէջ կայ համերաշխութիւն, եղբայրական ձեռք կը կարկառենք ամէն տեսակ ուժերու, որոնք կարեւոր և օգտակար են իրենց յատուկ սահմաններուն մէջ, և ամէն զրկեալներու, որոնց կրնանք օգտակար ըլլալ մեր կարողութեամբ:

Ընթանա՛նք ուրեմն մեր գծած ուղին անվհատ, հաստատակամ, արի ու խոհական կերպով, սպասելով սակայն ընթերցողներէն իրենց պարտականութիւններուն կատարումը՝ հանգէպ մեր թերթին:

ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ

Խոշորակի հրատարակութիւնը ունի իր շարժառիթը, իր նպատակը, իր մեքրտը և իր գործելու եղանակները:

Իր շարժառիթն է հայ ազգին գաւակներուն ներկայիս մէջ ամէն կնքաւորութեամբ, որ աշխարհի հետեւանքներ կրնայ ունենալ այս ազգին համար, եթէ գէթ չչեղոքացուի առ այժմ՝ բարերար և ուժեղ միջոցներով, որոնց վրայ անտարակոյս կը մտածեն արդէն լուրջ ու պատուական գլուխներ: Խոշ-

զակ իր ներած ուժերով կ'ուզէ օգնա-
կան մ'ըլլալ ատոնց :

Իր նպատակն է ընդգրկել ազգային
ամէն խնդիր-ընտանեկան , տնտեսա-
կան , կրթական , դրական , լեզուական ,
վարչական , բարոյական , կրօնական ,
իմաստասիրական և այլն , ցուցնելու
համար վերքերը և , եթէ կարելի է ,
անոնց դարմանները , հետեւիլ ընդհա-
նուր մտքովութեան առած նշանաւոր
քայլերուն և մասնաւորապէս ընկերվա-
րութեան գիտական սկզբունքներուն և
ուղղութեանը :

Իր մերտն է , այլ և այլ խնդիրնե-
րու խաղարկութեան մէջ անոնց հա-
մապատասխան մեթոտ մը ունենալ նա-
յելով ճիւղին , այնպէս որ կրնայ ըլլալ
ի հարկին հետեւցական (deductif) , մա-
կածական (inductif) , համեմատական
(analogique) , յարակցական , և այլն :
Ինքնին կը հասկցուի ասկէ որ մասնա-
ւոր կուսակցութեան մը գրօշակը չենք
կրեր , կամ , ուրիշ բառերով , կը վե-
րաբերինք այն կուսակցութեան (այս
բառը իր լաւագոյն իմաստով առնե-
լով) , զոր պիտի սրոշեն մեր յատուկ
լոյսերը և ժամանակը :

Իր գործելու միջոցները են քաջա-
լերել օգտակար հաստատութիւնները ,
օգտակար ձեռնարկները , պաշտպան
կանգնել մեծ գաղափարներու , վեհ ու
գիններու , անխոնջ կրթական ու գրական
ընտիր զինուորներու , պարկեշտ ու
բարի անհատներու , անիրաւօրէն տա-
ռապօղներու ու անժառանգներուն ,
գիտնականօրէն քննադատելով ամէն
զեղծումները , ամէն անիրաւութիւն-
ները , վար առնելով անոնց գիմակները ,
որոնք կը կերամիտ , ազգամուլ , ժառան-
գաւորներու պաշտպան կը ձեւանան
մասնաւոր շահու մը կամ նպատակի մը
համար , և կամ ուրիշ հարկ եղած մի-
ջոցներու դիմելով , զորս պիտի որոշեն

ժամանակը , տեղը և պարագան :

«Խուզակ» ի յատուկ յօդուածներն պի-
տի երեւին առանց ստորագրութեան .
իսկ ազոնցմէ դուրս եղածները պիտի
կրեն իրենցինը :

Այս է ընդհանուր գիծերով ծրա-
գիրը «Խուզակ» ի , որ կը փնտռէ , ինչ-
պէս անունը կը ցուցնէ , ճշմարտու-
թիւնը : Եւ որովհետեւ շատ անգամ
ճշմարտութեան կայծը կը ցայտէ գա-
ղափարներու բաղխումէն , «Խուզակ» կը
հրաւիրէ ամէն անկեղծ և դարուն ոգին
հասկցող ազգային գրեհները , հոգ չէ
թէ նոյն իսկ տարբեր ալ ըլլան երբեմն
իրմէն :

Վարչութիւն

ԱՆԳՈՒԹԱՅԻ ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐԸ

Վառնայի մէջ մեր ազգակից դժբաղդ եղ-
բայրներու թշուառ վիճակը ամօքելու հա-
մար անգղիական նպաստամատոյց ընկերու-
թեան ջանքերը ու զոհողութիւնները յայտնի
են : Առերեւոյթս այդ ջանքերու ու զոհո-
ղութիւններու ազնիւ հեղինակները պէտք
էր որ ամէն հայու երախտագիտութեանը
արժանանային : Բայց մենք որ կ'ուզենք
գործը հիմէն քննել ու դատել՝ անոր ոգին ,
ճշմարիտ արդիւնքները ու հետեւութիւն-
ները նկատելով , չենք կրնար այդ աչքով
նայիլ գործին վրայ . եւ աւելի լայն մտա-
ծելով , կը պնդենք թէ ատոնք արմատա-
կան դարման մը չեն տիրող անարկու թըշ-
ուառութեան . «կուժով ջուր կրելով աղօ-
րիք չը դառնար» կըսէ ծանօթ հին առածը :
Թողունք թէ նպատակը եղանակը ունի
նուազատացուցիչ հանգամանք մը , որ զգա-
ցում ունեցող ամէն մարդու նողկանք կ'ազ-
դէ , բայց եթէ նոյն իսկ լաւագոյն եղանա-
կով մ'ալ ըլլային նպատակները , ըստ մեզ
օգուտէ աւելի փնաս ունին , եթէ ատոնց
նպատակը մեռնելու մօտ եղող թոքախտա-
ւորի մը անտանելի ու անօգուտ կեանքը
քանի մ'օր միայն երկնցնել չէ : Մենք
մարդկային արժանապատուութեան եւ յառա-
ջացումի տեսակէտով , աւելի կողմնակից

ենք ժողովուրդի մը . . . , երբ դա զոհէ աւերիչ ու կործանարար քաղաքականութեան մը , եւ կամ ընկերական յոռի ու վատ կազմակերպութեան մը , քան թէ ողորմութեամբ ու մուրացկանութեամբ ապրելուն . վասն զի մինչդեռ տուային մէջ կայ աւելի ապստամբական ոգի ու քաջութիւն , երկրորդին մէջ ընդհակառակը կայ ստրկութիւն , տկարութիւն եւ վատ համակերպութիւն . ամէն մարդ երբ այս մասին իր գիտակցութեանը դիմէ կը բաւէ : Մեր վիճակը հիմնական դարմանի մը կը կարօտի , առանց որուն միւս ամէն ջանքերը կը նմանին այն վիրակապերուն , որ թէեւ վէրքը ժամանակաւորապէս աչքէ կը հեռացնեն , բայց կը թողուն որ ա՛յն ներսէն իր աւերիչ դերը կատարէ , այնպէս որ ա՛լ օր մը անկարելի ըլլայ զայն դարմանել : Քիտի ըսուի սակայն թէ , ի՞նչ պիտի ըլլար այսքան մարդերու վիճակը այս ձմեռ եղանակին մէջ , երբ ա՛լ ապրելու ամէն միջոցներէ զուրկ ըլլալէ վերջ այս նպատակներն ալ չը հասնէին . մենք ատոր իբր պատասխան պիտի հարցնենք թէ , ի՞նչ եղան Հայաստանի մէջ 100,000 հայեր , ի՞նչ եղան Պօլիս 10,000էն աւելի հայեր , այո՛ հոս ալ թերեւս պիտի ըլլային , ինչ որ շատ չեմ կարծեր , շատ անօթութենէ մեռնողներ , բայց պիտի ըլլային նաեւ արիացողներ , կենդանացողներ : Վերջին ծայր անօթութիւնը , վերջին ծայր յուսահատութիւնը , զօրաւոր կամք մը եւ անբընդաւարելի բարոյական ուժ մը ստեղծելու ազդակը պիտի ըլլային . եւ մենք այս ժամանակիս մէջ շատ պէտք ունինք այդ տեսակ մարդերու փրկուելու համար , քանի որ մեր վիճակը այսքան վատթարացած է այնպիսի պատճառներով , որոնց վրայ չենք ուզեր խօսիլ օգտակար չը համարելով : Նպատակները , քիչ մը հանգիստ կեանքը , քիչ մը շունչ առնելը թշուառին համար աւելի քնարեր եւ հետեւաբար աւելի վնասակար են , քան թէ ծայրայեղ յուսահատութիւնը , ծայրայեղ անօթութիւնը . զի մինչդեռ գլխովին անհանգիստ ժողովուրդէ մը կրնանք յուսալ որ ծնին վերը ըսուածին նման ծայրագոյն մտքերով սրուած , ու զգացումներով վառուած անձեր՝ այս ժամանակիս մէջ ուրիշ ամէն ազգերէ աւելի մեր վրայ ծանրացող գերութեան ու ստրկութեան շղթաները խորտակելու ու այսպէս

վերածնութեան ու բարեշրջման ճամբուն մէջ մտնելու համար , միւս կողմէ պէտք է ամբողջապէս մեռած համարել օտար երկիրներու մէջ այն հայ ժողովուրդը , որ քիչ թէ շատ ապրելու միջոցներ գտած է ու կեանքը կը քաշքշէ . վիճակ մը , որ ճշմարտապէս մահէն շատ աւելի յոռի է , ու ամէն մարդ սիրով պիտի ուզէր վերջացնել այդ օրինակ կեանք մը եթէ վարագոյրին հետեւի զաղտնիքին համար միւսքը բնական հետաքրքրութիւն մը չուենար : Մենք շատ լաւ կը հասկնանք թէ երբ մէկը կը վիրաւորուի , ամէն բանէ առաջ հարկ է անոր վէրքը կապել ու արիւնին հոսումը դադրեցնել , մինչեւ որ հիմնական դարմաններ հասնին . այս տեսակէտով մենք պիտի դիմենք այդ բարեբարները . բայց մեր տեսածը այդ չէ , մեր տեսածը բոլորովին ուրիշ բան է : Մեզի կ'ուզեն օրորով քնացնել . կ'ուզեն մեզ համակերպեցնել անտանելի վիճակի մը . կ'ուզեն ասդին անդին ցիրուցան մեզ ընել՝ ա՛մէն յոյսէ զրկելով : Չը գիտեմ Ափրիկէի ո՞ր երկիրը , Ամերիկայի ո՞ր մեր կազմութեան ու վիճակին անյարմար հողը կ'առաջարկեն մեզ տանիլ , ուր մեզ նիւթական ու ֆիզիկական ցաւերու հետ բարոյական անտանելի ցաւերու ալ մատնելու համար . մեզնէ կ'ուզեն մեր որբերը որպէս զի բարեգործական հաստատութիւններու մէջ կերցնեն ու դատարակեն . հաստատութիւններ որոնց ի՞նչ ըլլալը շատ աւելի կանուխ յայտնի էր մեզ եւ որ ալ այսօր յայտնի եղած է ամէնուն ալ : Մենք անանկ կը մտածենք որ , եթէ հայերը ամբողջովին մուսլիման ըլլային , թէ որ այդ կրնար իրենց արժանաւայելի գոյութիւնը ու հաւասար իրաւունքները ապահովել հայրենի հողին վրայ , աւելի պզտիկ սխալ մը գործած կ'ըլլային , քան թէ հոս հոն աննպատակ ու անյարմար կլլմաներու տակ ցրուէին եւ առժամանակեայ կերպով նպատաստւորուէին :

Այս նպատակամտոյց ընկերութենէն զատ իմացանք որ վերջերս եկած է Պ . Ատամանուն անզղիացի , որ աւելի գործնական միջոցներ ձեռք պիտի առնէ եղեր թշուառութենէ փրկելու համար խեղճ գերի ժողովուրդ մը . թէ ամէն մարդու գործ պիտի ճարէ եղեր իր ունեցած արհեստին , կարողութեանը ու վիճակին համեմատ . թէ իրենց ստակը առանց կորսնցնելու ամէնուն ալ

բարիք պիտի ընեն եղեր եւ այլն: Սառգիւ սքանչելի բան: Հինք ուզեր ներկայացնել, վասն զի մեր բուն նպատակը այդ չէ, թէ մինչեւ հիմակ ի՞նչ ըրած են եւ ինչպէ՞ս: Կ'ըսենք միայն թէ ժամանակ մը այդ տեսակ միջոցները գործնական եղած էին ու իրենց արդիւնքներն ալ ունեցած էին ժամանակաւորապէս, երբ ճարտարարուեստական արդի յեղաշրջումը դեռ չէր սկսած աշխարհի մէջ, ու դրամադուրը դեռ այսչափ չէր տիրապետած մեքենաներու օժանդակութիւնովը, եւ երբ դեռ մարդկային ուժը իր տեղը ունէր, եւ շատ անգամ կարեւոր դրամադուրի մը տեղը կը բռնէր: Բայց այս միջոցներուն օգտակարութեան եզանակը գրեթէ անցած է. այս դարուն մէջ ազոնք շրջուցիչ կրնան երեւիլ կարգ մը անժամանակներուն իսկ օգտակար են միշտ դրամատէրներուն: Որոնք որ աշխարհի արդի վիճակը գիտեն, ամէն բանի մէջ սոսկալի ու մահացուցիչ մրցումը կը տեսնեն ու կը կարգան թէ ի՞նչպէս ընդունուած են մեր եղբայրները Ամերիկայի գործաւորներէն՝ երբ անոնք առաջին անգամ ոտք կոխեր են լոյսի ու երեքարականութեան մեծ աշխարհը, չուտով կրնան ըմբռնել այսպիսի միջոցներու օգտակարութեան աստիճանը: Մենք Ամերիկայի գործաւորները պարտաւելու համար չէր որ այս օրինակը բերինք. անոնք թեւեւ ուրիշ կերպ չէին կրնար ընել: Մենք կը կարծենք թէ մեզի պէս ժողովուրդ մը փրկելու միակ եւ լաւագոյն եղանակն է գնել մեզ մեր սնած ու մեծցած երկրին մէջ այնպիսի պայմաններու ու վիճակի մէջ, որ մենք կարող ըլլանք հետեւելու մեր բնական ընդունակութիւններովը դարուն ամէն գիտական, ընկերական, ճարտարարուեստական լաւագոյն բնաշրջումներուն. եւ ասոր համար գործնական ու խելացի գործունէութիւն մը պէտք է, որ կը պակսի կամայ կամ ակամայ մեր յիշած այդ բարեգործներուն քով, ինչպէս երկար ժամանակ պակսած էր, մեր հայ բարերարներու քով, որոնք թէեւ կրօնական հիւանդութենէ բերնուելով ափերով ոսկի նուիրած են վանքերը ու եկեղեցիները ականակուռ եւ ոսկի խաչերով զարդարելու համար, բայց ազգին ապագայ օգուտին համար հետադարձութեամբ բան մը չեն ըրած: Մուսլիմանի խալիֆան հաւատարիմ իր ներկայացուցած ու գաւա-

նած վարդապետութեանը աւելի գործնական եղած է հայ ազգը ջնջելու, եւ այդ աւերիչ գործերուն պատճառները Եւրոպայի ժողովուրդներուն տարբեր գոյներով ներկայացնելու գործին մէջ—մէկ կողմէն ջարդելով, միւս կողմէն Եւրոպայի ամենէն նշանաւոր թերթերը ու պետական մարդիկը գաղտնի կաշառելով—քան թէ այս մեզ օգնող բարի Անգղիացիները: Դժուարին չէ մտածել ու տեսնել հիմնապէս օգտակար ըլլալու, ամէն ցաւերու արմատական կերպով վերջ մը տալու այնպիսի եղանակներ, որոնք թէեւ սին փառասիրութեան ու կրօնային հին ու դրամասիրական զգացումներուն յագուրդ չը տան, թերթերու հրապարակներու վրայ ազմուկ չը հանեն, թշուառներու բերնէն օրհնութիւններ չը խլեն, սակայն եւ այնպէս անձայն եւ անշուկ կարենան քաղաքական աշխարհը կերպարանափոխ ընել, բարձրածիր եւ աշխարհի ընդհանուր զարգացման գործին համար Ասիայի մէջ յատուկ գեր մը կատարելու սահմանուած ազգ մը ազատել կաշկանդիչ ու ճգմող կապերէ. նման այն գիտուններուն որոնք թէեւ գիտական աշխարհը յեղաշրջած են իրենց անշուկ ու անազմուկ աշխատութեամբը սակայն անձանօթ մնացած են շատ անգամ դիւրեք ծնող հասարակութեան, մինչդեռ անգին աննշան վիպասան մը այնքան մեծ ազմուկ հանած է եւ իր վրայ սքանչացողներու բռնակ մը ստեղծած: Մենք կ'ուզէինք տեսնել աւելի այն տեսակ գործողներ, որոնք որոշ յատակագիր մը ունենային թշուառ ազգ մը փրկելու համար ու բոլոր ուժովն անոր գործադրութեանը աշխատէին, քան թէ անձրագիր ու անհետատես կերպով խարխալողներ՝ որոնց ողորմասիրութիւնը լոկ յայտնուէր աշխարհի, նման այն հարուստին որ տարիներով իր աղքատ դրացիին անանունդ հիւծելուն առջեւ քար կը մնայ, բայց երբ անոր մահուան լուրին վրայ թաղը իրար կ'անցնի, թաղման ծախքը ինք կը հոգայ քանի մը օր ալ այրին ու որբերը կը կերակրէ, որով թաղին մէջ իր նպաստը խօսակցութեան առարկայ ընելու եւ իր փոքրոգի փառասիրութեանը յագուրդ տալու համար: Սակայն չաբաթ մը վերջը այրին կ'իյնայ նորէն սոսկալի թշուառութեան մը ճիւղաններուն մէջ եւ որբերը փողոցը կը շրջին բոկոտն եւ մերկ, անօթի՝ Ահաւասիկ

այս ըլլայ թերեւս մեզ իբրեւ հայ այս ձեւով բարերարել ուղղութեան գոհողութիւններուն վերջը:

(Շաբունակելի)

Պարոն Լուի Պերքրանի հետեւեալ վերնագրով տեսակը կը ներկայացնենք ընթերցողներուն՝ քարգնանելով, այն յուսով որ պիտի ունենայ իր օգտակարութիւնը

ԻՆՉ Է ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Քանի մը տարիէ ի վեր շատ կը խօսին ընկերվարականներուն եւ ընկերվարութեան վրայ: Օր չ'անցնի որ օրաթերթ մը չգրադիյնաւ պահանջումներով, զորս մկրտած են «ընկերվարական» ներու անունով: Գործաւորական ցոյց մը, քանդու մը, յուզում մը չիբթի որ ընկերվարութիւն բառը խանութեամբ չըլլայ հետը:

Եւ սակայն, ընկերվարական տեսակաւորութիւնները բաղդատարար քիչ ճանչցուած են: Հազարաւոր աշխատողներ զիրենք ընկերվարական կ'անուանեն կամ այնպէս կը կարծեն եւ, իրապէս, չպիտի կրնային բացատրել այն գաղափարները, որոնց համար ի հարկին սպաննել պիտի տային զիրենք: Կը տառապին եւ կը տենչան լաւապէս կեանքի մը: Բարեկեցութեան այս տենչանքն է, երջանկութեան եւ արգարութեան այս ծարաւն է որ զիրենք գէպ առաջ կը մղէ, առանց ճիշդ գիտնալու թէ ինչ կը նշանակեն այս բառերը—ընկերվարութիւն, հաւաքականութիւն, համայնականութիւն:

Եւ միայն գործաւորները չեն որ այսպէս են: Լրագրողներ, քաղաքական մարդիկ, երեսփոխաններ, պաշտօնեաներ՝ որոնք ատեն ատեն կռիւի կը նետուին ընկերվարութեան «աղետալի եւ իւթորական» անուանած վարդապետութիւններուն դէմ, միեւնոյն ագիտութեան մէջ են: Որովհետեւ, եթէ ընկերվարութիւնը՝ նկատուելով իբրեւ բարեկեցութեան տենչանք, այնչափ հին է որքան աշխարհը, կրնայ ըսուիլ որ այս վարդապետութիւնը՝ գիտնականօրէն խօսելով, հաստատուած եւ սահմանուած է

միայն բաւական սահմանափակ տարիներէ ի վեր:

Ասկէ դատ մենք չենք պիտի ֆրանսերէն լեզուով գրուած ժողովրդական տեսակ, ամէնուն մատչելի, որուն մէջ այս գաղափարները ներկայացուած ըլլան պարզ եւ ամէնուն հասկնալի կերպով:

Ընկերվարութիւնը ուսումնասիրել ուզողը պէտք է ուսումնասիրէ զայն զիրքերուն մէջ որոնք բաղդատարար սուղ են, եւ որոնք, մեծ մասամբ, գրուած են այնպիսի ոճով մ'որ մատչելի չէ գործաւորական դասերուն:

Ընկերվարութեան ժողովրդական ներկայացման այս պակասն է որ մեզ դողեց այս տեսակը գրելու: Գործը շատ դժուար է, գիտենք, եւ առանց երկիւղի չէ որ սկսանք այս աշխատութիւնը, զոր շատ մը բարեկամներ մեզ խորհուրդ կուտային ընելու:

Ինչ որ ալ ըլլայ, մեր կրցածը ըրինք մենք, յուսալով որ մեզմէ վերջ ուրիշներ պիտի ներկայացնեն աւելի տաղանդով եւս աւելի յստակօրէն այն վարդապետութիւնները որոնք պարտին վերանորոգել մարդկութիւնը:

Ա.

Ի՞նչ է ընկերվարութիւնը:

Այս հարցումին մենք կը պատասխանենք ընկերվարութիւնը՝ բարձրագոյն քաղաքակրթութեան վիճակ մ'է, ուր բոլոր մարդիկ՝ գիւրին աշխատութեամբ մը, իրաւունք պիտի ունենան կեանքի բոլոր առաւելութիւններուն, համեմատութեան գործադրութեամբ:

Առեւը ձեւովն հաւատ, մեկը առեւըն հաւատ, այսպէս է ընկերվարական նշանաբանը:

Ընկերվարութիւնը ունի՞ իր գոյութեան պատճառը:

Անտարակոյս, որովհետեւ այսօր բարեկեցութիւնը տրուած է միայն մէկ քանիներու, երբ իրօք արդար է որ բոլոր մարդիկ ունենան անկէ իրենց բաժինը:

Ոչ ոք սակայն պիտի համարձակէր պաշտպանել այսօր որ ամէն ինչ լաւ է եւ թէ արդարութիւնը կը թագաւորէ երկիրի վրայ:

Ոմանք կը ծնին հարուստ եւ ուրիշներ աղքատ: Այլ՝ գիպուածին պարզ արդիւնքն

է: Բաշխողը եւ խիստ քաջակազմ անձեր չեն աշխատիր, մինչդեռ տկար եւ անուժ ուրիշ անձեր ստիպուած են արտադրել, եթէ չեն ուզեր անօթութենէ մեռնիլ:

Երկիրս՝ որ պէտք էր ըլլար մարդկութեան հասարակ ժառանգութիւնը եւ որ ամէն հարստութեան աղբիւր է, իւրացուած է մէկ քանիներէ:

Զօրութիւնը փոխանակած է մինչեւ այսօր իրաւունքը եւ արդարութիւնը: Ամենէն զօրաւորները՝ երկիրին տէր դարձած են եւ տկարները աշխատելու ստիպած են: Այսպէս գերութենէն անցանք սարկութեան եւ սարկութենէն վարձուորութեան:

Օրէնքներ, օրինադիրքեր արդարացուցած են զօրութեան այս զեղծութիւնը: Այսօր, ա՛լ եւս զէնքը ձեռքին չէ որ կը տիրանան երկիրին եւ հարստութեան, ուրիշը աշխատցնելով է:

Մեր քերթին իբրեւ քերթօք կ'ուզենք քարգմանելով հրատարակել Պարոն Լեոն Պրօքիի «Փիլիսոփայութեան ժողովրդական պատմութիւնը», որուն արժանաւոր գնահատութիւնը կը ձգենք հասկոյող ընթերցողին:

ԼԵՕՆ ՊՐՕԹԻԷ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ուսուցանել ուզել ժողովուրդին, — այսինքն կրթութեան անժառանգներուն, մեր այն եղբայրներուն, զորս ծննդեան դիպուածը զրկած է զիրենք գիտութեան հասարակաց գանձէն իրենց բաժինը ունենալէ, — թէ ի՞նչ է փիլիսոփայութիւնը, բացատրել թէ ի՞նչ է գիտութիւններուն գիտութիւնը անոնց որոնք հազիւ գիտեն թէ գոյութիւն ունին գիտութիւններ, միթէ անհնարին գործի մը ձեռնարկել չէ՞: Եւ սակայն, եթէ ստոյգ է որ փիլիսոփայութիւնը՝ իմաստութիւն է, ի՞նչ իրաւունքով իմաստութիւնը պիտի ընէինք կարգ մ'առանձնաշնորհալիներու մենաշնորհը:

Ժամանակով, իմաստունները, ժողովուրդեան ծերերը՝ որոնք ժողովուրդներուն հօտապետներն էին, սրբավայրերուն խորը կը պահէին, ամէնուն աչքէն ծածկելու համար, այս իմաստութիւնը որ իրենց իշխանութեան գրաւականը եւ աղբիւրն էր: Ժողովուրդները այսօր ա՛լ չեն ուզեր որ իրենց հետ վարուին իբրեւ հօտերու հետ՝ ա՛լ հօտապետ չեն ուզեր, իրենք զիրենք կառավարելու կարող կը դգան զիրենք: Պէտք է ուրեմն որ տաճարին վարագոյրները պատուաւին եւ ամբօրները կարենան երես առ երես գիտել այս մտաւորական արեգակը, որ այսուհետեւ պէտք է որ մի՛այն ուղղէ իրենց քայլերը: Եթէ կան ճշմարտութիւններ զորս լաւ է որ չգիտնան տղաքները, չկան սակայն ճշմարտութիւններ որոնք վտանգաւ ըլլան հասուն տարիքին համար: Ժողովուրդները ա՛լ տղաքներ չեն՝ բաւական երկար առեն ապրեցան անոնք առասպելներու եւ խորհրդանշաններու կաթովը՝ աւելի հիւթեղ մտունդ մը պէտք է իրենց: Ա՛լ բան մը պէտք չէ որ դաղանի պահուի: Ամենէն վսեմ ճշմարտութիւնները, ինչպէս ամենէն հասարակ ծանօթութիւնները, պէտք է որ ամէնուն մատչելի դարձուին, որովհետեւ մօտ է վայրկեանը երբ ա՛լ մարդ անունին արժանի չպիտի նկատուի նա՛, որուն օտար կը մնայ մարդկային բան մը, նա՛ որ աստիճան մը չպիտի գիտնայ ամէն ինչ որ մարդկային հանճարը կրցած է գտնել:

Ի՞նչպէս, Պղատոնի եւ Արիստոտէլի, Պէյքընի եւ Լայպնիցի երեսէն է որ մենք ենք ինչ որ ենք: Փիլիսոփայութիւնն է որ տէրերը եւ գերիները ըրաւ քաղաքացիներ, ա՛յն է որ փարատեց խաւարը որուն ծանրութենէն կը խզուէր երկիրը, եւ մենք պիտի քալէինք լոյսի եւ ազատութեան այս աշխարհին մէջ, որ անոր գործն է, առա՛նց գիտնալու թէ ի՞նչ է այն եւ առա՛նց ճանչնալու անոր փառաւոր թարգմաններուն անունը: Ա՛յն է որ՝ ամէն ատեն, խորտակեց հարստահարիչներուն ձեռքին մէջ եղած շղթաները, եւ հալածեց նախապաշարուները որոնք իմացականութեան կապանքներն են՝ անկէ՛ է որ մեզ պէտք է գտն իրմէն ներշնչուած մեծ յեղափոխութիւններու այն քան ցանկալի այս լրուինները, եւ մենք պիտի համակերպէինք բարիքներուն սպասելու առա՛նց ջանալ գիտնալու զանոնք բաշխող ձեռքը:

Ոչ, անկարելի է ասիկայ: Գործաւորներ, երկրագործներ, երբոր անցնիք այս պալատին բակերուն մէջէն, որուն մէջ երբեմն գերաստիճան կը բազմէին ձեր տէրերը եւ ուր այսօր իշխանները ա'լ չեն համարձակիր մտնել բայց եթէ կանչուած նկատեն զիրենք ազգային կամքովը: Երբոր անցնիք Նէքարդի արձանին առջեւէն, ողջունեցէ՛ք այս մեծ մարդը եւ իւրովի ըսէք որ անոնք՝ որ իր մօտ կը գտնուին եւ սուր կը կրեն, իր ազատագրող մտածումին կոյր գործաւորոջները եղած են միայն: Անոնք ունեցան փառքը եւ ինք՝ աքսորը: Բայց իր կամաւոր աքսորէն սարսեց աւելի բռնակալութիւններ քան բնաւ զօրավար մը չնուաճեց գաւառներ: Ողջունեցէ՛ք նաեւ այս մէկ ուրիշը—Ապէլարն է, վանական ապստամբ մը, զոր վանքը մարեց, բայց որ՝ մեռնելէն առաջ, պատուաստեց միջին դարու զեռ զօրաւոր ծառին վրայ ազատ մտածումի ոսկէ ձգիչը: Եթէ մարդկութիւնը՝ խեղճ եւ ծագրելի մատուցներու տեղ, ունենար պանթէօն մը, հոն պիտի գտնէիք ձեր բոլոր հայրերուն պատկերները, որովհետեւ իրօք անոնք եղան ձեր հայրերը որոնք ձեզ առին կեանքէն շատ աւելին՝ ձեզի ազատութիւն տալով:

Իրենց պատմութիւնը, ձեզ պիտի բռնի, բայց լա'ւ մօտիկ ըրէք՝ մտածումով մեծ ըլլալով, իրենց մտածումներուն մէջ է որ կ'ամփոփուի իրենց ամբողջ պատմութիւնը: Եւ այս մտածումները իրենցինքն չեղան միշտակ անոնք՝ անհրաժեշտ արդիւնքը եղան այն մտաւորական զարգացման որուն հասած էր, իրենց ժամանակին, մարդկային սեռը: Որովհետեւ ո'չ ոք իր գործին առանձին հեղինակն է, որովհետեւ ամէն մարդ կ'օգնէ իւրաքանչիւրին աշխատութեանը: Երբոր արտ մը հերկէք, թէ՛ արօրը հնարողը, անոր խօփը զարդնողը եւ թէ՛ անոր փայտը ձեւողը կը հերկեն ձեզ հետ: Երբոր կահ մը չինէք, միթէ այս գործին մէկ մասը պարտական չէ՞ք նաւորդներուն որոնք օտար երկիրներ գնացին բերին սուղ փայտերը զորս կը կտրէք դուք, հիւսններուն՝ որոնք շինեցին անոնց նաւը, անթիւ բանօրներուն՝ որ անոնց պատրաստեցին ուտեստ եւ բնակարան, գիտուններուն՝ որոնք ձգեցին քարտէսները եւ հնարեցին գործիքները առանց որոնց նաւորդները պիտի թափառէին

զէպքին համեմատ: Ամէն ինչ իրար կապուած է, ամէն ինչ իրարու շղթայուած: Զեզ պատմելով այն մարդերուն մտածումը որոնք ամէնէն աւելի մեծցուցին ամէն դարու ծանօթութիւններուն գումարը, նոյն իսկ մարդկային միտքի պատմութիւնն է որ պիտի ուրեմն սլափում ձեզ:

Բայց դո՞ւ մ'ելլաք. այս վերացեալ բաները՝ որոնցմէ ձեզ կը վախցնեն, զժուար է հասկնալը միայն այն պատճառով որ դանոնք կ'աբաղայտեն բարբարոս բառերով, միայն խորամուտներուն համար գիւրիմանալի: Ես պիտի խօսիմ ամէնուն լեզուն, եւ եթէ արուեստով գիտունները զիս մեղադրեն թէ հարեւանցի եմ քիչ մը, որովհետեւ զանց պիտի ընիմ երկրորդական մանրամասնութիւնները եւ հեշտ հմտութեան մը օգնութեանը չպիտի փնտռեմ, գոնէ դուք զիս չպիտի մեղադրէք թէ խրթին եմ:

Երբոր կարգաք լինցնէք այս գրկոյրը, ամէնքդ ալ պիտի զարմանաք տեսնելով որ փիլիսոփայ էք առանց գիտնալու, որովհետեւ պիտի տեսնէք որ փիլիսոփայութեան յուզած հարցերը՝ խորը նայելով, նոյն են ինչ որ դուք ձեզի կ'ընէք ամէն օր ձեր գործատուներուն եւ ձեր ընտանեկան խօսակցութիւններուն մէջ:

Ուրեմն մի՛ վնասիք մէկ բառ մը. հետեւեցէք մեր Ռապրէին խորհուրդին: Դուք լաւ ակոսներ ունիք. կոտորեցէ՛ք ձեզի երկընցուցած ոսկրս, անոր ծուծը ծծելու համար: Առիւծի ծուծ է այս, եւ ո'վ որ անկէ ճաշակէ՝ անընկճելի կը դառնայ: Ասիկայ լաւ գիտեն օրհնեալ լուծերու կամ ոսկեղօծ լուծերու բոլոր այս հնարողները, ուստի տեսէք թէ ո՞րքան կ'ատեն փիլիսոփայութիւնը, ո՞րքան կը նգովեն եւ կը հալածեն փիլիսոփաները:

Ներոն զանոնք կը վռնտէր Հոմէրոս. պապերը՝ հաւատաքնութեան կը մատնէին զանոնք: Մեզ բաւելու է ասիկայ. քանի որ ազատութեան եւ յառաջգիտութեան թշնամիները կը միաքանին փիլիսոփայութիւնը ջնջելու համար, ուսումնասիրենք փիլիսոփայութիւնը:

(Շարունակելի)

